ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«29» մարտի 2018 թվականի № 35-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 275-Ն ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 275-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում)՝ կատարումն ապահովելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների (այսուհետ՝ Ծրագիր)՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության միջոցառումների իրականացման և գերակա խնդիրների լուծման վերահսկողների և կատարողների ցանկը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:
2. Վերահսկողներին և կատարողներին՝ ապահովել Ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության միջոցառումների իրականացումը և գերակա խնդիրների լուծումը:
3. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել Ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության միջոցառումների և գերակա խնդիրների կատարման հսկողությունը, և յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5-օրյա ժամկետում արդյունքների մասին ամփոփ տեղեկանքի ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի
2018 թվականի մարտի 29-ի N 35-Ա հրամանի

# Ց Ա Ն Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ

| հ/հ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Վերահսկողները | Կատարողները/ Համակատարողները | Ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2399-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Գազի տնտեսությունում կսահմանվեն անվտանգության նվազագույն պահանջներ մատակարարների և բնակիչ սպառողների համար՝ անկախ սեփականության ձևից | Նախարարի տեղակալ՝ Հայկ Արզումանի Հարությունյան | ԷՎ, «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ, «Գազպրոմ Արմենիա» (համաձայնությամբ) | սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 2. | «Անվտանգության կանոնները մայրուղային գազատարներում հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի N 119-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Մայրուղային գազատար-ներում սահմանվեն անվտանգության կանոններ այն բոլոր կազմակերպությունների և ստորաբաժանումների համար, որոնց գործունեությունը կապված է բնական գազի տեղափոխման և ստորգետնյա պահպանման հետ, ինչպես նաև գիտահետազոտական, նախագծային կոնստրուկտորական և մայրուղային գազատարների համար աշխատանքներ իրականացնող այլ կազմակերպությունների համար | Նախարարի տեղակալ՝ Հայկ Արզումանի Հարությունյան | ԷՎ, «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ, «Գազպրոմ Արմենիա» (համաձայնությամբ) | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | «Հայաստանում ածխաջրածնային շարժիչային վառելիքներին այլընտրանք հանդիսացող էներգակիրների կիրառման համար ենթակառուցվածքների հեռանկարային զարգացման միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Կսահմանվեն այլընտրանքային էներգակիրների կիրառման համար ենթակառուցվածքների հեռանկարային զարգացման միջոցառումների ցանկը, պատասխանատուները և ժամկետները | Նախարարի տեղակալ՝ Հայկ Արզումանի Հարությունյան | ԷՎ | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 4. | «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | Սահմանելով տեխնիկական շահագործում իրակա-նացնող անձնակազմի գործառույթները, կապահովվի էլեկտրակայանքների անվտանգ և անխափան շահագործումը | Նախարարի տեղակալ՝ Հայկ Արզումանի Հարությունյան | ԷՎ, «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ, «ՀԷՑ» ՓԲԸ (համաձայնությամբ) | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ |

**Հավելված N 2**
**ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի**
**2018 թվականի մայիսի 29-ի № 35 -Ա հրամանի**

## Ց Ա Ն Կ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ

| հ/հ | Գերակա խնդիրները | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը | Վերահսկողներ | Կատարողներ | Յուրաքանչյուր քայլի կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* |
| 1. | Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի արդիականացում և ավարտական փուլի իրականացում | 1) Կառավարման և պաշտպանական համակարգի արդիականացում | Նախարարի տեղակալներ՝ Հայկ Հմայակի Հարությունյան, Հայկ Արզումանի Հարությունյան, ԷՎ պետ՝ Հ.Բադալյան ՎԴԾՎ պետ՝ Վ.Մարտիրոսյան, | «ՀԱԷԿ» ՓԲԸ | օգոստոսի 2-րդ տասնօրյակ |
| | | 2) Սարքավորումների փոխարինում և արդիականացում՝ ըստ ժամանակացույցի (ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև՝ ՀՀ տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար ՀՀ կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին համաձայնագիր (270 մլն դոլարի վարկային և 30 մլն դոլարի դրամաշնորհային միջոցներ) | | | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 2. | Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի և ենթակայանի կառուցում | 1) Հենասյուների և սարքավորումների ներկրման աշխատանքների ավարտ | Նախարարի տեղակալ՝ Հայկ Հմայակի Հարությունյան ՎԴԾՎ պետ՝ Վ.Մարտիրոսյան | «ԲԷՑ» ՓԲԸ | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| | | 2) Ենթակայանի կառուցման, հենասյուների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների ավարտ (Իրանի արտահանման զարգացման բանկ (ԻԱԶԲ) և Սանիր Ինտերնեյշնլ ՖԶԵ ընկերություն | | | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 3. | Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման մեկնարկ | 1) Պետական պարտքի վրա լրացուցիչ ճնշում չգործադրելու նպատակով ծրագրի առաջին փուլի իրականացման համար միջազգային ֆինանսական կառույցներից առևտրային վարկերի ներգրավման բանակցությունների իրականացում և վարկային համաձայնագրի ստորագրում | Նախարարի տեղակալ՝ Հայկ Հմայակի Հարությունյան ՎԴԾՎ պետ՝ | «ԲԷՑ» ՓԲԸ | օգոստոսի 3-րդ տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 2) էլեկտրահաղորդման օդային գծերի և ենթակայանների նախագծման աշխատանքների մեկնարկ | Վ.Մարտիրոսյան | | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 4. | Վերականգնվող էներգետիկ աղբյուրների կիրառմամբ արտադրական հզորությունների ստեղծում | 1) «Մասրիկ» տեղանքում մոտ 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման նպատակով հայտարարված մրցույթների արդյունքների ամփոփում և ՖՎ էլեկտրակայանի կառուցման մեկնարկի ապահովում | Նախարարի տեղակալ՝ Հայկ Արզումանի Հարությունյան, ԷՎ պետ՝ Հ.Բաղալյան | «ՀՎԷԷ» հիմնադրամ | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| | | 2) Հողմային էլեկտրական կայանների կառուցման մասնավոր ծրագրերին աջակցության արդյունքում քամու ներուժի չափումների իրականացում | | ԷՎ | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| | | 3) «Կառկառ» տեղանքում մինչև 2018 թվականի ավարտը երկրաջերմային հետախուզական հորատման ծրագրի արդյունքում էլեկտրակայանի կառուցման իրագործելիության դրական եզրակացության դեպքում երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման ներդրումային ծրագրի մշակման ապահովում | | «ՀՎԷԷ» հիմնադրամ | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 5 | «ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ առաջին ազգային զեկույցի կազմում և հրապարակում և ոլորտի իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում և հրապարակում | 1) ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ առաջին ազգային զեկույցի նախագծի կազմում (Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցներ) | Նախարարի տեղակալ՝ Վարդան Գագիկի Գևորգյան, | ԸԳ | օգոստոսի 3-րդ տասնօրյակ |
| | | 2) ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ առաջին ազգային զեկույցի նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն և հրապարակում (Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցներ) | | | սեպտեմբերի 1-ին տասնօրյակ |
| | | 3) Միջազգային լավագույն փորձի տեսանկյունից իրական սեփականատերերի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ինստիտուցիոնալ շրջանակի վերլուծության հիման վրա իրական սեփականատերերի ճանապարհային քարտեզի մշակում և հրապարակում (Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցներ) | | | հունվարի 3-րդ տասնօրյակ |
| 6. | Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման նպատակով ախտորոշիչ | 1) Տնտեսական գնահատում՝ Հայաստանի համար հանքարդյունաբերական ներդրումների տարբեր տեսակների տնտեսական կենսունակության կամ նպատակահարմարության գնահատում | Նախարարի տեղակալ՝ Վարդան Գագիկի Գևորգյան | ԸԳ | հունիսի 3-րդ տասնօրյակ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ուսումնասիրությունների իրականացում | (Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցներ) | | | |